ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ՕԼԻՄՊԻԱԴԱ
ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ
ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՓՈՒԼԻ ՀԱՐՑԱՇԱՐ
12-րդ դասարան (տևողությունը՝180 րոպե)

Սիրելի՛ աշակերտ, օլիմպիադայի հարցաշարը միտված է բացահայտելու յուրաքանչյուրիդ ստեղծագործական կարողությունները և ինքնուրույն վերլուծական ունակությունները: Գրականության կախարդական աշխարհում բացահայտի՛ր քո աշխարհը: Եղի՛ր ազատ, անկաշկանդ. մտքերդ ձևակերպի՛ր կապակցված, հստակ և հասկանալի:
Այսօրվա քո հաղթանակը նվիրվում է սրբադասված զոհերի՝ Ծիծեռնակաբերդում թևածող հոգիների հիշատակին:
Հաջողությո՛ւն և հաղթանա՛կ:

Հանձնաժողովի նախագահ՝ Ս.Աբազյան

1.Օգտվելով հայ քնարերգության մեծերից՝ ներքին կապակցում ունեցող 2-ական տող գրի՛ր ներքոհիշյալ թեմաներով.
ա) սեր կամ մայր
բ) գարուն

5մ.

2.Ելնելով Միլվա Կապուտիկյանի «Մտորումներ ճանապարհի կեսին» պոեմից՝ գրի՛ր քո մտորումները մեր ժողովրդի անցած ճանապարհի, ներկայի և հատկապես գալիքի մասին:

5մ.

3. Ե՞րբ է գրվել «Եվ այր մի՝ Մաշտոց անուն» պոեմը: Ո՞վ է հեղինակը: Բացատրի՛ր՝
…Մեր բաժան-բաժան հողերը նորից
Այդ նա էր միայն, որ բերեց իրար
ՈՒ միավորեց…արդեն մեր մտքու՞մ…

Էլ ո՞ր հեղինակն ունի նմանատիպ պոեմ. գրի՛ր վերնագիրը և գրելու տարեթիվը: Ո՞ր տոնակատարություններին էր նվիրված պոեմը:

5մ.

4.Շիրազի Մասիսապաշտությունը. ի՞նչ է Արարատը Շիրազի համար:(«Կուզեի  նստել մի քարի վրա»): Ի՞նչ է կտակում Շիրազն իր որդուն:
Ուրիշ ո՞ր  հեղինակներն են երգել Մասիսը: Գրի՛ր հեղինակների անունները և, եթե կարող ես, հիշի՛ր համապատասխան տողեր:

Հանձնաժողովի նախագահ՝ / Ս. Աբազյան/